



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԵՏԵԱԼՆԵՐՈՒՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Լիբանանի կացութիւնը կը մնայ մտահոգիչ ու պատերազմական գործողութիւնները օր ըստ օրէ կը ծանրացնեն ժողովուրդին ապահովութեան ու ընկերային տագնապները:

Ինչպէս նախընթաց շաբաթներուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան վերջին օրերուն եւս հետեւողական հաղորդակցութիւններ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ, հետեւելու համար նորագոյն զարգացումներուն:

Ընդառաջելով Վեհափառ Հայրապետի թելադրանքներուն, Առաջնորդ Սրբազանը, Թեմիս ժողովականութեան հետ համախորհուրդ, յանձնարարած է մեր հոգեւոր հովիւներուն, որ յառաջիկայ Կիրակի եւս, յընթացս Ս. Պատարագի, կոչ ուղղեն մեր հաւատացեալ ժողովուրդին, որպէսզի մասնակցութիւն բերեն Լիբանանի աղետալներուն ի նպաստ հանգանակութեան: Նուիրատուութիւնները պետք է հասցնել Ազգ. Առաջնորդարան, Western Prelacy հասցեով եւ Aid for Lebanon արձանագրութեամբ, որպէսզի փոխանցուին Կաթողիկոսարան:

## **ASSISTANCE FOR THE VICTIMS OF LEBANON**

For more than three weeks now, Lebanon has been under heavy shelling, which has left the country in turmoil.

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has been in constant contact with His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, regarding the providing of aid to the victims.

Upon the recommendation of His Holiness, the Prelate has advised all Prelacy Parish Priests to once more urge our faithful to make donations for the needy people of Lebanon on Sunday, August 6.

Donations should be addressed to the Western Prelacy with the memo Aid for Lebanon, so that they may be transferred to the Catholicosate.

## **ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ**

1984-Էն սկսեալ, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն եւ հոգաբարձութեան հովանաւորութեամբ կը կազմակերպուի երիտասարդաց

խմբակի ամառնային բանակումը, որ տեղի կ'ունենայ Pacific Palisades շրջանի Camp Shining Light բանակավայրին մեջ, կը տեսնես մեկ շաբաթ եւ կը վայելէ հովանաւորութիւնը Ս. Խաչ Մայր Տաճարին:

Բանակողները, Կիրակի, Օգոստոս 6-ին, կը մեկնին բանակավայր: Անոնք իրենց պատասխանատուներուն՝ Շիրազ Սաւոյեանի եւ Շանթ Գէնտիրեանի ցուցմունքներով պիտի հետեւին Սուրբ Գրային սերտողութեանց, որոնց իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւները: Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի այցելէ բանակումի վայրը եւ հոգեւոր խորհրդակցութեան պահ մը պիտի ունենայ մեր պատանիներուն հետ:

Բանակումին մասնակցող պատանիները առիթը պիտի ունենան արտադասարանային աշխատանքներու, ինչպիսին են մարզական խաղեր, լող, արշաւ, ձեռային եւ այլ աշխատանքներ:

## YOUTH CAMP SHINING LIGHT

Since 1984, Holy Cross Cathedral in Montebello, under the auspices of the Parish Priests and Board of Trustees, has organized a weeklong summer camp for youth. Campers will depart for Camp Shining Light in Pacific Palisades on Sunday, August 6.

The Prelate will visit the camp and give spiritual guidance to the participants.

Under the supervision of camp counselors Shiraz Savoian and Shant Kendirian, the campers will participate in Bible studies, as well as various extracurricular activities, sports, etc.

## Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կիրակի, Օգոստոս 13-ը, Սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնն է, եւ մեր եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկը:

Այս տօնին առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի, ապա նաեւ անդաստան եւ խաղողօրհնէք պիտի կատարուի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի պատարագէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Կլէնտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ մատաղօրհնէք եւ խաղողօրհնէք:

Վստահ ենք որ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, մեր հաւատացեալ ժողովուրդը Աստուածամօր նուիրուած այս տօնը պիտի նշէ աղօթքով ու մեր աւանդութեանց յատուկ հանդիսութեանց խումներամ մասնակցութեամբ:

Նկատի ունենալով, որ այս տօնը նաեւ տօնն է Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան, Շաբաթ, Օգոստոս 12-ի երեկոյեան, ժամը 8-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի նախատօնակի հսկում եւ եկեղեցին իր դուռները մինչեւ կէս գիշեր բաց պիտի պահէ ուխտաւոր հաւատացեալներուն համար:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ Մեծի Տանն Կիլիկիոյ Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Վարիչ Գերշ. Տ. Նարեկ

Եպս. Ալեքսեզեան: Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ շրջափակին մէջ պիտի կատարուի Անդաստան եւ խաղողօրհնէք, որմէ ետք «Բաղրամեան» սրահին մէջ Տիկնանց Միութիւնը կազմակերպած է ճաշկերոյթ մը:

Ս. Աստուածածնայ տօնին առիթով, մեր եկեղեցիները կազմակերպած են աւանդական հանդիսութիւններ ու ընտանեկան հաւաքներ: Այսպէս, Փասատինայի Սուրբ Սարգիս եկեղեցին այս տօնը այս տարի եւս պիտի նշէ ընտանեկան մթնոլորտի մէջ: Ս. Պատարագի եւ խաղողօրհնէքի արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի պիտի ունենայ ընտանեկան հաւաքական ճաշ:

Նմանապէս, Օրէնճ Զառնթիի Սրբոց Զառանից Մանկանց եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ տիկնանց միութեան կազմակերպութեամբ, Ս. Պատարագի եւ խաղողօրհնէքի արարողութենէն ետք, Mile Square Park-ին մէջ տեղի պիտի ունենայ դաշտահանդէս, որուն ընթացքին պիտի կատարուին անդաստան եւ խաղողօրհնէք:

## HOLY MASS AND BLESSING OF GRAPES ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER-OF-GOD

Sunday, August 13 is the Feast of the Assumption of the Holy Mother-of-God, one of the five major Feasts of the Armenian Apostolic Church.

On this feast day, Holy Mass and blessing of grapes will take place in all of our Prelacy churches.

The Prelate, Archbishop M. Mardirossian, will conduct Holy Mass and deliver the sermon at St. Mary's Church in Glendale. Following Holy Mass, the Prelate will conduct the Blessing of the Offerings and the Blessing of Grapes.

On the eve of the feast, at 8:00 p.m., evening services will be conducted at St. Mary's Church. The church will accept our faithful until midnight.

His Grace Bishop Nareg Alemezian, Ecumenical Officer of the Holy See of Cilicia, will conduct Holy Mass and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello. Following Holy Mass the blessing of grapes will take place, as well as a luncheon at Baghramian Hall organized by the parish Ladies Guild.

On the occasion of the Feast of the Assumption, our churches have also organized traditional gatherings. At St. Sarkis Church in Pasadena, a family lunch will take place in the church courtyard following Mass and the blessing of grapes.

Forty Martyrs Pastor, Board of Trustees, and Ladies Guild have organized a picnic following Holy Mass at Mile Square Park in Orange County, during which the blessing of the grapes will take place.

## Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԶՈՎԻՆԵՐԸ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԵՆ ԿԼԵՆՏԵՅԼԻ ADVENTIST ԶԻՒՆՂԱՆՈՅԸ

Չորեքշաբթի, Օգոստոս 9-ի առաւօտեան, Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն պիտի այցելեն Կլենտէյլի

Adventist հիւանդանոցը եւ անոր մատրան մէջ պիտի կատարեն բժշկութեան աղօթք եւ խաղողօրհնէք:

Արարողութենէն ետք, քահանայ հայրերը պիտի այցելեն հիւանդանոցի հայ հիւանդներուն, պիտի աղօթեն անոնց առողջութեան համար, օրհնուած խաղող պիտի բաժնեն, եւ Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութիւնները պիտի փոխանցեն:

## PRAYER AND BLESSING OF GRAPES AT GLENDALE ADVENTIST HOSPITAL

On the Feast of the Assumption, Pastors and Deacons from St. Mary's Church will visit the Glendale Adventist Hospital on Wednesday, August 9<sup>th</sup>, to offer prayers and conduct the blessing of grapes.

Following the service, the pastors will visit patients to offer blessed grapes and convey the Prelate's best wishes.

### **Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԵՋ**

Ուրբաթ, Օգոստոս 11-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Ս. Պատարագ պիտի մատուցուի Mission Hills-ի «Արարատ Տան» մատրան մէջ:

Արարողութեան պիտի հանդիսապետէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը, մասնակցութեամբ հոգեւոր հովիւներուն:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Օրէնճ Քառուսթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեցեան: Պիտի կատարուի հաւաքական խոստովանանք եւ խաղողի օրհնութեան աւանդական արարողութիւն:

Արարողութենէն ետք, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը պիտի այցելեն »Արարատ Տան« հիւանդանոցի բաժինը եւ իրենց բարեմաղթութիւնները պիտի փոխանցեն պատուարեալ մեր հայ մամիկներուն եւ պապիկներուն, ինչպէս նաեւ պատասխանատուներուն եւ անձնակազմի անդամներուն:

## CELEBRATION OF THE FEAST OF THE ASSUMPTION AT ARARAT HOME

On Friday, August 11, the Prelate will preside over Holy Mass at Ararat Home in Mission Hills on the Feast of the Assumption.

Rev. Hrant Yeretsian of Forty Martyrs Church will conduct Holy Mass and deliver the sermon. The traditional blessing of the grapes will follow Holy Mass.

Following the services, the Prelate and clergy members will visit the hospital section of Ararat Home, where they will offer best wishes to patients, as well as the Board of Directors and staff.